

ՄԱՆԿԱԿԱՆ ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹԻՒՆ

ՆՐՈՒԱՆԴ ԴԱՋԱՐԵԱՆՑԻ

I

Ընթերցանութիւնը մանուկների դաստիարակութեան գլխաւոր տարրերից մէկն է: Նրբ մանկական խելքը, հետզհետէ կապողւրելով ու զարգանալով, սկսում է ընդհանուր ճշմարտութիւններ որոնել կեանքի և բնութեան մէջ, երբ դիտելու, քննելու, հետազոտելու և իմանալու ներքին փափազը սկսում է գրաւել երեխայի հոգեկան աշխարհը,—աչս զրութեան մէջ, ուսումը և ընթերցանութիւնը միակ միջոցն են, որոնցով կարելի է չափեցնել երեխայի հոգեկան ծարաւը, որոնցով կարելի է ուղղել մանուկների միտքը և զգացմունքները՝ դէպի ճշմարիտը, աղնիւր, գեղեցիկը... Այս պարզ դատողութիւնով իսկապէս որոշւում է թէ ուսման և թէ մանկական ընթերցանութեան գրքերի ճշմարիտ նշանակութիւնը: Նրեխայի հոգեկան կասկածների և տարակուսանքների ժամանակ, երբ նորա խելքը և զգացմունքները գեռ չեն ամրացել և որոշ ուղղութիւն ստացել, երբ նորա թէ մտաւոր և թէ բարոյական հասկացողութիւնները երերում, տատանւում են նորա մէջ,—ուսումը և ընթերցանութիւնը, որպէս մի հաստատ և ամենաճիշտ դաստիարակչական միջոց՝ պէտք է փարատեն երեխայի մտաւոր-բարոյական կասկածները՝ բաց անելով նորա առաջ գիտութեան և ճշմարտութեան ասպարէզն, տալով նորա մտքին առողջ և իսկական սնունդ, զարթեցնելով նորա մէջ բուն մարգկալին աղնիւր ցանկութիւններ...

Այս հիմնական տեսակէտը երբէք չը պէտք է մոռանալ ուսման, դաստիարակութեան գործում. սրանով պէտք է չափել այն բոլոր միջոցները, թէ ուսումնարանական դասերի և թէ մանկական ընթերցանութեան վերաբերութեամբ, որոնք առաջարկւում, գործադրւում են կրթութեան նպատակների համար: Մեր արդի գրականութիւնը չափազանց աղքատ է ինքնուրոյն մանկական ընթերցանութեան գրքերով: Ընդհակառակ՝ թարգմանութիւնները, մանուկների կարգալու փոքրիկ և էժանազին հրատարակութիւնները, օր աւուր աւելանում են մեզանում: Սակայն չը նախելով

մեր ուսուցիչների և, շատ անգամ էլ, կողմնակի անձանց՝ տիկիճներին, օրիորդներին այդ գովելի աշխատասիրութեանը, որով նրանք ցանկանում են հարստացնել զանազան թարգմանութիւններով մեր ժողովրդական և մանկական գրականութիւնը, — միւս կողմից բոլորովին ճշմարիտ է մեր մասնակի չափազանց անտարբերութիւնը դէպի այդ հրատարակող ճորանոր թարգմանական գրքուկները։ Մեր պարբերական հրատարակութիւնները, որոնք աւելի շատ և աւելի լաճախ միջոց ունին խօսելու այդ գրքուկների մասին, սովորաբար մի երկու ճախադասութիւններով՝ ապագրական և թարգմանական «ձևերի» մասին թեթև և կատաղութիւններով վերջացնում են ամեն բան։ Հրատարակած գրքուկի ներքին միտքը, ճորա արտապատած գազափարը, ճորա բարոյական — դաստիարակչական ընդհանուր արժանաւորութիւնը՝ բոլորովին անուշադիր են մնում լրագիրների մէջ, կարծես այդ մի երկրորդական խնդիր է։ Կարծես մանկական և ժողովրդական գրքուկների (թէկուղ՝ թարգմանական) գլխաւոր արժանաւորութիւնը արտաքին չքննութեան, լեզուի և տպագրական չրիֆտի մէջ է կապւում... Այն ինչ մեզանում օր ըստ օրէ աւելանում են զանազան թարգմանութիւնները, օր ըստ օրէ հարստանում, ճոխանում է մեր ուսումնարանների և ընտանիքների «մանկական գրադարանը», որի մէջ անխտիր կերպով դրած են շատ ծաղրակող ատկութիւնների և արժանաւորութեան գրքուկներ։ Եւ այդ գրքուկները աւել-պակաս հետաքրքրութեամբ կարդացւում են մեր ուսումնարաններում, ընտանիքներում։ Նոր առաջացող սերունդը, մեր ապագա հասարակութեան անդամները, թէ տղաք և թէ աղջիկներ, այդ գրքերի վերաջ են դաստիարակւում, այդ գրքերից են ստանում այն պաշարը, որ պիտի սերմանէ նրանց մատաղ հոգու մէջ՝ գիտութեան, ճշմարտութեան, բարու և ազնւութեան սերմերը... Արդեօք բոլոր այդ գրքերը համապատասխանում են իրանց կոչմանը, արդեօք «լոկ ընթերցանութիւն» տարածելուց դատ՝ այդ գրքերը հասնում են և՛ դաստիարակչական բարձր նպատակների, — այս մասին ոչ ոք չի մտածում...

Աչքի առաջ ունենալով այս ցաւալի և կորստաբեր հանգամանքը, երբ ծնողները և, շատ անգամ, դաստիարակ-ուսուցիչները «չը գիտեն» ինչպէս ընտրել երեխայուց ընթերցանութեան գրքեր, և, առանց խտրութեան, ամեն հրատարակած թարգմանական գրքուկ առնում և գցում են երեխայուց ձեռքը։ աչքի առաջ ունենալով, որ մեր ուսումնարաններում սովորող թէ փոքր և թէ չափահաս երեխաները լաճախ ստիպւած են լինում կարդալ բոլորովին ձեռասակար և ալանդակ բովանդակութեան գրքեր, — մենք համարձակւում ենք հետեւեալ առաջարկութիւնը անել այն մարդոց, որոնք հասկանում և գնահատում են ընթերցանութեան գրքերի կրթիչ նշանակութիւնը, որոնց համար թանգ է մեր արդի ընդհանուր ուսումնարանական գործը, որոնք հաւատում են՝ ապագայ սերնդի երջանկութեան, բարդաւորութեան գաղափարին։

Հարկաւոր է մեր պարբերական մամուլի մէջ ստեղծել մի նոր ուղղութիւն, մի նոր և խիստ հետևողական կրիտիկա՝ մանկական գրքերի վերաբերութեամբ: Հարկաւոր է մի որոշ, խելացի և ազնիւ կազմակերպութիւն, հասարակութեան բարոյական շահերին նախանձախնդիր մարդոց մի լուրջ և գործին տեղեակ ընկերութիւն, որի միակնչ պատասկը լինի՝ ընդհանուր և ներդաշնակ համաձայնութեամբ՝ քննել բոլոր այն գրքերը, որոնք հրատարակուի են մանկական ընթերցանութեան համար:

Այս գործը շատ ծանր և շատ վեհ գործ է, որ պահանջում է մեր երիտասարդ ուժերի ընտրեալ միաւորութիւնը, որ պահանջում է շատ աշխատանք և անկեղծ սէր դէպի մանուկները, դէպի նրանց հոգեկան զարգացման վսեմ շահերը...

Մեր պարբերական մամուլը, անշուշտ, մեծ ուրախութեամբ սեղ կը տալ աղջկիսի կազմակերպութեան մշակած փոքրիկ և խելացի քննութիւններին, որոնց գլխաւոր նպատակը պիտի լինի քննել և որոշել մանկական գրքերի ընդհանուր արժանաւորութիւնը, ընդհանուր դաստիարակչական մտքերը կամ գաղափարները, որ պարունակուի են այդ գրքուկների մէջ:

Անշուշտ մեր ուսումնարանական և մամուլի գործերին մօտիկ անձերը տեսած և կարդացած կը լինին Խարկովի վարժուհիների հրատարակած երկու մեծահատոր գրքերը՝ Что читать париж? վերնագրով: Ի՞նչ հիանալի աշխատութիւն է այդ, ինչքան աշխատանք, ինչքան սէր և անձնիրութիւն է երևում այդ երկու հատոր պատկառելի գրքերի մէջ: Եւ, որ ամենից զարմանալին է, ինչպէս հետաքրքրութեամբ և սիրով կարդացուի են այդ երկու անադին գրքերը, որոնք, ըստ երևութին, շատ անհետաքրքիր և չոր-ցամաք պիտի լինէին: Ռուսաց մամուլը գրկաբաց ընդունեց լարգելի վարժուհիների այդ գեղեցիկ և լուրջ հրատարակութիւնները և ընթերցող հասարակութիւնը մի քանի հազար օրինակներով գնեց այդ գրքերը: Խարկովի վարժուհիների կատարած այդ հսկայական գործը թող օրինակ լինի և մեզ համար, մեր վարժուհիների և վարժապետների համար: Մանկական և ժողովրդական գրքերի խիստ և անաչառ քննութիւնը, նրանց համար ընդհանուր գնահատութիւն և բարոյական—դաստիարակչական արժէք որոշելը՝ մի մեծ և էական օգուտ կը լինի մեր ընդհանուր լուսաւորութեան գործին, մի աղնալիսի օգուտ, որի հետ կարող է մրցել միայն ուսումնարանը... Ի հարկէ մեզանում այդ գործը անհամեմատ հեշտ է, քան թէ ռուսաց մէջ. մենք իսկապէս դեռ նոր ենք սկսել մանկական և, երբեմն էլ, ժողովրդական գրքեր հրատարակել. մեր թարգմանիչները և, մանաւանդ, ինքնուրոյն հեղինակները շատ և շատ քիչ են՝ համեմատաբար ռուսաց գրականական լէգէօններին, որոնց գրած և թարգմանած գրքերը հեղեղի պէս տարածուի են ամբողջ լաւնատարած Ռուսաստանում: Մէկ կողմից գործի վսեմ և անսահման օգտակար լինելը, միւս կողմից նորա համեմատական հեշտութիւնը՝ Խարկովի վարժուհիների

հրատարակութեան հետ՝ թող է տալիս կարծել, որ այս միտքը կ'արժանանա մեր արգելի վարժունքների և ուսուցչաց լուրջ ուշադրութեանը և մօտ ապագայում կ'իրագործուի մեր մէջ. ուրիշների խելացի օրինակին հետեւել՝ մի տեսակ առաքինութիւն է, որ պատիւ է բերում մարդոց, վերոյիշեալ պատկառելի հրատարակութիւնը այս ղէպքում կարող է շատ զգալի թեթևութիւն մտցնել գործի մէջ, կարող է որպէս մի ուղեցոյց ծառայել շատ կնճռոտ և անորոշ հարցերում: Իսկ առաջմ, իբրև առաջին փորձ, մենք հէնց այս. չօդ. ածում կ'աշխատենք մի քանի խօսք ասել պ. Աղալեանցի մանկական դրութիւնների մասին, որոնք պարբերապէս հրատարակում են «Աղբիւր» մանկական ամսագրում:

II

Նախ անհրաժեշտ է ընդհանուր կերպով բացատրել «Աղբիւրի» նշանակութիւնը և նորա կատարած դերը մեր արդի ուսումնարանական, կամ դաստիարակչական ասպարեզում: «Աղբիւր»-ի ունեցած անսովոր չափողութիւնը ամենալաւ գրաւականն է, որ նորա երեւոյթը անհրաժեշտ էր մեր մէջ, որ նա կարողացաւ բաւականութիւն տալ մեղանում եղած անհրաժեշտ պահանջներին: Եւ ճշմարիտ, մինչև «Աղբիւր»-ի հրատարակելը, դեռ ոչ ոք չէր մտածում երեխայոց ընթերցանութեան մասին, ոչ ոք չէր աշխատում ուսումնարանից դուրս՝ երեխայոց ուշադրութիւնը գրաւել անպիսի հասարակ, մատչելի և պարզ գրածքներով, ինչպէս որ արեց «Աղբիւր»-ը: Թէ իւր արտաքին, գեղարւեստական շքեղութիւնով և թէ ներքին՝ թեթև, հետաքրքիր և մատչելի ոճով, մանկական հասկացողութեանը և զգացմունքներին չարմար փոքրիկ պատմութիւններով, այդ ամսագիրը առաջին տարիներից արժանացաւ մանուկների համակրութեանը: Մանուկները օր ըստ օրէ սկսեցին սիրել նրան, սկսեցին քնքոյզ կապերով միանալ այդ նոր և անկեղծ բարեկամի հետ... Այս ուրախալի երևույթը պէտք է խոստովանել իբրև փաստ, որ ամեն մարդ տեսնում և դիտում է ներկայումս: Իբրև ընթերցանութեան գիրք, իբրև դեղարւեստական մի գրաւիչ և համեստ հրատարակութիւն, «Աղբիւր»-ը այժմ տարածւած է մեր գաւառների բոլոր ուսումնարաններում, և փոքրիկ մանուկները մի առանձին ուրախութեամբ, մի առանձին հաւատարմութեամբ կարդում են նրան: Եւ նոյն իսկ այդ հանգամանքը, որ մանուկները սիրում և հաւատում են «Աղբիւր»-ին, որ նորա համարները ամենից շատ և ամենից լաճախ տարածւում են մեր հասարակութեան մէջ, կրկնում եմ, նոյն իսկ այդ հանգամանքը մեզ պարտաւորացնում է աւելի մեծ ուշադրութիւն դարձնել «Աղբիւր»-ի վերաջ, աւելի խիստ և մանրազնին կերպով քննել նորա մէջ դուրս եկած իւրաքանչիւր մանկական գրածքը: Բաւական չէ՝ որ մի գիրք, կամ պարբերական հրատարակութիւն տարածւում, կարդացւում է հասա-

րակութեան մէջ. բաւական չէ, որ հասարակութիւնը սիրում է ալս ինչ, կամ ալս ինչ գիրքը, լրագիրը և այլն... Ընդհակառակ, որքան մի գիրք, կամ պարբերական հրատարակութիւն աւելի շատ տարածւած, հռչակւած է հասարակութեան մէջ, այնքան էլ շատ ուշագրութիւն պէտք է դարձնել նորա բովանդակութեան վերաջ, այնքան էլ խոր և մանրամասն պէտք է քննել ալդ գրքի, կամ լրագրի ներքին, «գաղափարական» լատկութիւնը, նորա բարոյական ընդհանուր և ամենագլխաւոր արժանաւորութիւնը: «Աղբիւր»-ը շատ մեծ և գնահատելի ծառայութիւն արեց մեր հասարակութեանը, տարածելով մանուկների և չափահասների մէջ ընթերցանութեան, գիրք կարդալու սէրը. ալս առաջին և գլխաւոր քալն է, որ կատարեց «Աղբիւր»-ը մեծ աջողութեամբ և զարմանալի տակաւով... Բայց միթէ ընթերցանութիւնը միայն ընթերցանութեան համար է. միթէ ալսքան գրքեր, լրագիրներ և ամսագիրներ հրատարակում ենք նորա համար, որ մեր ժողովուրդը միայն «ընթերցանութիւն» սովորի.—ի հարկէ ոչ, թէ ընթերցանութիւն տարածելու ժամանակ և թէ մանաւանդ ալդ գործը կատարելուց լետոյ, երբէք չը պէտք է մոռանալ, որ ընթերցանութիւնը միայն մի արեւստ է, մի միջոց է՝ հասարակութեան մէջ գիտութիւն, առողջ մտքեր և գաղափարներ տարածելու համար, հասարակութեան միտքը և հոգին դաստիարակելու, դարգացնելու, կատարելագործելու համար: Ո՛րքան համապատասխանում է «Աղբիւր»-ը ալն ներքին, գաղափարական կոչմանը, որպիսի մտքեր, գաղափարներ և դաստիարակչական իգէալներ է քարոյում մեր մանուկ սերնդին՝ ալդ սիրւած ու տարածւած ամսագիրը: Այս հարցին աւելի հիմնովին և «շօշափելի» պատասխան տալու համար՝ կարդանք հէնց ալս տարւալ «Աղբիւր»-ի մէջ պ. Աղալեանցի գրած հէքիաթները: Սո՛ղիսմամբ վերցնում եմ պ. Աղալեանցի գրածները, որովհետև ներկայումս «Աղբիւր»-ը լիովին մշակւում և կառավարւում է պ. Աղալեանցով, և մեր լարգելի մանկավարժը մեծ դեր է կատարում ամսագրի ընդհանուր ուղղութեան և բնաւորութեան մէջ:

Այս տարւալ չղււարի տետրակում պ. Աղալեանցը հրատարակեց մի հէքիաթ՝ «Նղեգնուհի» անունով:—Մի թագաւոր կամեցել է իւր որդուն ամուսնացնել: Որգին ասել է՝ թէ ես կ'ամուսնանամ ալն աղջկալ հետ, որ հօրից-մօրից չէ եղած: Թագաւորը մի պառաւ «Չաղուի» խորհրդով գնում է գետի ափը, կտրում է «չը բանեցրած» գանակով մի եղէգ, գցում է ջուրը և իսկոյն... կատարւում է մի անկարելի երևոյթ—եղէգը աղջիկ է դառնում, որի անունը դնում են Նղեգնուհի: Նղեգնուհին մերկ մարմնով մնում է ջրի մէջ, իսկ թագաւորը գնում է սուն՝ իւր հարսին զգեստ բերելու: Ալդ ժամանակ երևում է մի սևամորթ քօշա աղջիկ, խեղդում է ջրի մէջ Նղեգնուհուն և ինքը դառնում է թագաւորի որդու կինը: Թագաւորի որդին առում նրան: Մի օր գետից թագաւորագնը մի ոսկեղէն և արծաթեղէն ձուկ է բռնում, գցում է իւր աւաղանի մէջ և միշտ նստած աւաղա-

նի մօտ, սիրահարւածի պէս նաւում է ալդ ձկանը... Նորա կլինը որ տեսնում է ալդ, իսկոյն ցանկութիւն է չալտնում որ ձուկը մուրթնն, իրան ուտեցնեն, որ ինքն էլ գեղեցկանալ. ալդպէս էլ անում են, բալց նա չի գեղեցկանում: Զկան մի փուշ ընկնում է պարտէզը, փուշից մի գեղեցիկ ծառ է բուսնում, որի վերալ սիրահարւում է թագաւորազնը: Բօշալի աղջիկը կտրել և ալրել է տալիս ծառը. ալս ծառից մի տաշեղ ընկնում է հարևան պառաւի կտուրից ներս: Պառաւը տաշեղից մի խուփ է շինում, խուփը «գառնում» մի սիրուն աղջիկ, ծառաւում է պառաւին, զարմանալի կար ու ձև է անում և իւր համբաւը հասցնում է թագաւորազնի ականջը: Ալդ աղջիկը Նղեգնունին է: Թագաւորի որդին գալիս է նորա մօտ և Նղեգնունին «մորթած կաքաւի» բարձրաձայն կենդանի վկայութեամբ ամեն բան պատմում է նրան: Նղեգնունն տարան պալատ, իսկ բօշալի աղջկան կապեցին ձիու պոչից և քարէքար տւին: «Զարը ալնտեղ՝ բարին ալստեղ...» վերջանում է պ. Աղալեանցի հէքիաթը:

Ի հարկէ ալս բոլոր պատմածին խօ չի հաւատում ինքը պ. Աղալեանցը: Նա շատ լաւ գիտէ, որ երեխաներն էլ դժւար թէ հաւատան, որ եղեգնից աղջիկ դուրս եկաւ, ձկան փուշից՝ գեղեցիկ ծառ, ծառի տաշեղից՝ սիրուն օրիորդ... Իսկ որ հում կաքաւը չի կարող անկրակ խորովել, և չոր վազան ձիւղը չանկարծ կանաչել մի աղջկաչ հրամանով—ալս խօ ամեն իմար երեխալ գիտէ: Ի՛նչպէս կարող է երեխան հաւատալ ալդ «սուտերին», քանի որ կեանքում նա երբէք չի տեսել ալդալիսի բաներ, և չի էլ կարող տեսնել, քանի որ ուսումնարանում ամենալն օր նա լսում և սովորում է՝ թէ բնութեան մէջ ամեն մի առարկալ, կամ երևութ ունի իւր առաջանալու խելացի մշտական պատճառները, ընդհանուր և անփոփոխ օրէնքները, որոնք չեն կախւած մարդոց կամքից, մարգոց զանազան հրամաններից: Ուսումնարանում մենք աշխատում ենք սովորեցնել երեխաներին բնութեան մէջ կատարւող իսկական երևութների ներքին պատճառները, աշխատում ենք պարզել, ամրացնել և կազդուրել երեխալոց միտքը և երևակալութիւնը իրական աշխարհի անմահ ճշմարտութիւններով. իսկ պ. Աղալեանցը, հակառակ բոլոր գիտութիւններին, աշխատում է հաւատացնել մանուկներին՝ թէ եղեգնից կարող է աղջիկ դուրս գալ, ձկան փուշից ծառ բուսնել և էլ չը գիտես թէ ինչ տեսակ անբնական, հրէշաւոր բաներ... Նւ զարմանալին ալն է, որ ալս մոլորութիւնների համար մեր ժողովրդական բանաստեղծը աշխատում է գործ դնել իւր տաղանդի բոլոր ուժը, աշխատում է ալնպէս գրաւիչ և կախարդական միջոցներ հնարել, որ հեշտութեամբ կարողանալ կաշառել մանուկների դիւրաթեք երևակալութիւնը: Նւ ինչ օգուտ՝ եթէ պ. Աղալեանցը կարողացաւ թէկուզ հաւատացնել մանուկներին ալդ ամենը. չէ որ վաղ թէ ուշ նրանք դարձեալ մոռանալու են ալդ խաբէութիւնը, չէ որ գիտութեան, ճշմարտութեան լոյսը շուտով դարձեալ ոչըն-

չացնելու է՝ տղիտուրթեան ստեղծած ալլանդակ երևակայական սրահներն երբ.

Եթէ հին կուսպաշտական հայերը երգում և գովաբանում էին վահագնի ծնունդը հետեւեալ կերպով՝

Ընդ եղեղան փող՝ ծուխ ելանէր,

Ընդ եղեղան փող՝ բոց ելանէր.

Եւ ի բոցովն՝ պատանեկիկ վաղէր... և ալն,

այս բոլորը հասկանալի էր ալն ժամանակի համար, երբ դեռ մարդիկ անկեղծօրէն հաւատում էին դրան, երբ գիտութեան և հետազոտութեան ոգին դեռ չէր մտել մարդոց դարևոր նախապաշարմունքների մէջ. Այդ նախապաշարմունքները իւր ժամանակին ունէին ճշմարիտ, բնական նշանակութիւն, որովհետեւ մարդիկ իսկ ապէս հաւատում էին, որ ալք բոլորը կարող է կատարել բնութեան մէջ, որ վահագնի նման կտրիճ և դեղեցիկ տղամարդը «կարող էր» մարդուց չը ծնւել՝ ալ բոցավառ եղեղանից դուրս գալ... Ի՞նչ անկնք, որ կուսպաշտական հայերը ալլայէս էին կարծում. նրանք, բացի դրանից, էլի շատ բաներ էին կարծում, որոնց մեք ալ փմ չենք հաւատում, որոնք կորցրել են մեր աչքում իրանց բոլոր նշանակութիւնը. Պատմական ժամանակներից մնացած թէ գրատր և թէ բանաւոր աւանդութիւնները, հէքիաթները և առասպելները՝ աւելի ուսումնական, հնագիտական նշանակութիւն ունին մեզ համար, քան թէ մանկավարժական, դաստիարակչական արժէք. Մենք կարող ենք, աւելի մեծ հասակում, ուսումնասիրել մեր և օտար աղղերի հին պատմական անցեալը, պատմական կեանքի բոլոր զանազանակերպ երևութիները. Այստեղ մեզ անհրաժեշտ են ալք հէքիաթները, առասպելները, հեթանոսական տղէտ և բարբարոս ժամանակների ստեղծագործութիւնները. Մենք ուսումնասիրում ենք ալք բոլոր պատմական նիւթերը, որպէս դի կարողանանք հասկանալ հին ժամանակների մարդոց կեանքը, նրանց մտաւոր—բարոյական զարգացումը, նրանց կատարած թէ մեծ և թէ փոքր պատմական գործերը... Եւ այս բոլորը օգտակար է, խրատական է, հետաքրքիր է մեզ՝ հասակաւորներիս համար, որովհետեւ մենք կարող ենք քննել, կրիտիկալի ենթարկել պատմական մարդոց ամեն մտորութիւնները, սխալները, թերութիւնները, հիմնւելով մեր գիտութեան և կեանքից ստացած փորձերի վերալ. Իսկ երեխան, որ ամենին ղուրկ է լուրջ քննութեան, կրիտիկալի ընդունակութիւնից, որի հոգեկան ուժերը դեռ նոր են սկսում բացւել, դարդանալ նորա մէջ, որ աւելի կարօտ է ուրիշի օգնութեանը՝ իւր կասկածները, իւր տարակուսանքները փարատելու, վճռելու համար,— նա, կարգաւով հէքիաթների անբնական, հրէշաւոր երևութիւններ և դործերը, միանգամայն կարող է չփոթւել իւր մտքերի և դպացմունքների մէջ, կարող է թերահաւատութեամբ վերաբերւել դէպի ամեն ճշմարիտ և օղտակար բան, խառնելով իրականը՝ երևակայական ցնորքներին հետ, ճշմարիտ,

մարդկային գործերը՝ առասպելական հերոսների մտացածին, անճիշդ պատմութիւնների, արկածների հետ:

Եւ ասացի, որ երեխաները չեն հաւատում հէքիաթների չափազանց ալլաբանական, տարօրինակ պատմութիւններին.— ալո, չեն հաւատում, ալնպէս ինչպէս որ պատմած է հէքիաթների մէջ: Բայց, մի և նոյն ժամանակ, չը հաւատալով որ աղջիկը կարող է ձուկ դառնալ, մորթած կաքաւը խօսել, և չորացած խաղողի վազը՝ իսկույն կանաչել,— ապա բոլոր անկարելի սուտերին չը հաւատալով, երեխան դարձեալ ակամազ ենթարկւում է այդ միջօրօգիտի զոդեցութեանը, դարձեալ նորա երեակալութեան մէջ մտնում են անբնական և հիւանդոտ պատկերներ, որոնց մասին չի կարող հաշիւ տալ երեխան, որոնք դարձեալ անորոշ կասկածներ են լարուցանում նորա թուլ և չը կազմակերպւած հոգեկան աշխարհում: Եւ մանաւանդ երբ ալ հէքիաթը, իւր տարօրինակ և անբնական ձևով, չի պարունակում իւր մէջ մի մեծ և օղտակար զուտ բարոյական գաղափար, երբ արտաքին հրէշաւոր անցքերի ու դէպքերի տակ չի պահւած մի բարձր իդէալական տենդենցիա: Պատահում են, ճշմարիտ, ալնպիսի հէքիաթներ, որտեղ մարդիկ՝ զիւցադնական բոլոր անհասանելի ոլթերով՝ ֆանտաստիկական վառ պատկերներով և շլացնող, ապշեցնող հսկայական քաջութեամբ՝ կատարում են վսեմ, իդէալական գործեր, մարդասիրական, կամ հալոնասիրական աղնիւ լաղթութիւններ... Այսպիսի հէքիաթային հերոսներ են լուսաց միջօրօգիտի մէջ՝ Հերկուլէսը, Թէզէոսը, Պրօմէթէոսը և այլն: Պրօմէթէոսը մարդկային ազգը փրկելու համար՝ երկնքից խլում է աստուածային հուրը և տալիս է մարդոց... Իսկ ինքը, ալը զարհուրելի լանդգեութեան և մեծ «չարագործութեան» համար, արժանանում է աստուածների ամենախիստ պատմին: Ջևսի հրամանով՝ նրան շղթաւակապ գամում են Կովկասի բարձր լեռան վերայ, որտեղ զիշակեր անգղը պէտք է լաւիտեանս տանջէ նրան՝ անդադար կտցահարելով նորա սիրտը... Սա էլ է մի հէքիաթ: Բայց այստեղ հէքիաթի տարօրինակ ֆանտաստիկական ձևը ալն է անում, որ ներքին բարձր գաղափարը, ալը ձևի մէջ արտապատկերւելով, ամենազօրեղ և խոր տպաւորութիւն է անում մարդու վերալ և երեխան՝ ալը գաղափարի ու ժեղ տպաւորութեան տակ՝ ամենևին չէ էլ նկատում արտաքին ձևի տարօրինակ և անբնական լինելը: Այսպիսի հէքիաթը, ուղիղ որ, կարող է կրթել երեխային, կարող է զարթեցնել նորա մէջ բարձր, աստուածային զգացմունքներ: Պրօմէթէոսը ալնքան սիրում էր մարդկութիւնը, որ նա, ալը սիրուց դրդւած՝ ապստամբեց աստուածների դէմ, խեց երկնքից փրկարար կրակը, աւեց մարդոց որ ապրեն, տաքանան, սքանչանան ալը կրակով: Իսկ ինքը դատապարտեց լաւիտեանական տանջանքների... Բայց ինչ է անում ալ: Աղաչանցի պատմած Եդեգեուհին: Եդիպտական մեռած հոգիների նման՝ ալը հէքիաթի երեակալական հերոսուհին աստիճանաբար

անցնում է մի քանի շնչաւոր և անշունչ մարմինների միջից, որպէս զի՝ «ճակատագրի» որոշմամբ՝ ապացուցւի թէ չարութիւնը պատժուում է, իսկ բարին՝ չաղթանակ է ասանում... Եւ նոյն իսկ այդ հանդամանքը, որ բարին և չարը դանաղանում են միմեանցից ճակատագրի վերացական սնունդինութեամբ, որ այս տեղ մարդու անձնաւորութիւնը ոչնչի է հաւասարուում՝ կեանքի չարութեան դէմ կռւելիս, որ մարդու հոգեկան բոլոր ընդունակութիւնները և ուժերը չեն դուրս գալիս իրանց բարձր, իդէալական վսեմութեամբ—ինչպէս այդ մենք տեսնում ենք չունական հէքլաթների և դիւցաբանութեանց մէջ,—նոյն իսկ այդ հանգամանքը կորցնում է հէքլաթի բոլոր նշանակութիւնը և բարոյական արժէքը։ Այս է պատճառը, որ «Եղեգնուհին» ոչ մի տպաւորութիւն չի անում ընթերցողի վերայ, ոչ մի բարձր զգացմունք և գրգիռ չի չարացանում մարդու հոգեկան աշխարհում, ոչ մի գաղափարական աղելւ ոգևորութիւն չի ներշնչում մեր մէջ։ Այստեղ ամեն բան կատարւում է մարդոց կեանքից և ցանկութիւններից դուրս, հակառակ նրանց բնական—հոգեբանական սահանջներին, վերացական, աներևութ ճակատագրի որոշմամբ։ Միալն ընթերցողի երևակալութիւնը լցւում է դանաղան «հրաշքների» և աշքակապութեանց պատկերներով, որոնց ալլանդակ և անմիտ բովանդակութիւնը վախեցնում, զարմացնում և մոլորեցնում է նրան։ Եւ այս բոլորը առաջարկւում է երեխայոց ընթերցանութեան համար...

Անհամեմատ աւելի սարսափեցնող ու վախեցնող տպաւորութիւն է անում պ. Աղալեանցի երկրորդ հէքլաթը՝ «Ջանգի-Ջրանգի» անունով, որ տպւեցաւ «Աղբիւրի» երկրորդ համարում։ Այստեղ արդէն մարդկային երևակալութիւնը անցնում է իւր ամենալայն սահմաններից և մտնում է դժոխսալին քաջքերի, սատանաների, մարդազալների և հրէշաւոր գաղանների, շների աշխարհ։ Ի՞նչ տեսակ սարսափներ ասես՝ որ չի պատմում այստեղ պ. Աղալեանցը։ Ամբողջ տաշտերով խմոր կուլ տուող ծծկեր երեխայ։ ձիու ոտները սաղ-սաղ կլանող, խուրջինը մի անգամից որկորը տանող, ատամներով հաստ ծառերի բունները կտրող մի հրէշ-աղջիկ (Ես ամաչում եմ այս խօսքերից...), սատանաների հարսանիք. հսկալական ոստիւններ անող, կենդանի աղջկան մի անգամից կուլ տուող երկու զարմանալի շներ՝ Ջանգի-Ջրանգի. մարդկային լեղուով խօսող գաղան. ծառերի անունները մարդուն չիջեցնող արիւնի կաթիլ... և այլն, և այլն։ Ճշմարիտ, այս բոլորը մտաբերելիս, մարդ կարող է ուշաթափւել, հալիւցինացիա ստանալ... Այս ի՞նչ ցնորքներ են, այս ի՞նչ հոգեբանական քաօս է, որ պ. Աղալեանցը, որպէս մտաւոր սնունդ, առաջարկում է մեր խեղճ երեխաներին։ Մենք բողբոջում ենք այդ հէքլաթների գէմ, բողբոջում ենք լանուն ճշմարտութեան, լանուն դաստիարակչական սուրբ և ներական գործի, լանուն մատաղահաս փոքրիկ երեխաների, որոնք այդպէս չարաչար մոլորւում են պ. Աղալեանցի հէքլաթներով։ Դուցէ պ. Աղալեանցը մեղ ասէ,

որ արդ հէքիաթները ինքը չի հնարում իրանից, որ մեր ժողովուրդը դեռ արժամ էլ պատմում և ոգևորւում է արդ հէքիաթներով, որ արդ հէքիաթները մի տեսակ պատմական արանդութիւններ են, որ դեռ երկար մնալու են մեր ժողովրդի ստորին շերտերում:

Այո, մենք շատ լաւ գիտենք, որ հէքիաթները պատմական արանդութիւններ են. բայց չէ որ մեր ժողովրդի ընդհանուր տղիտութիւնը, անբարոյական և հակամարդկային կրքերը և ինստինկտները նույնպէս պատմական արանդութիւններ են, որոնց դէմ կռւում են արժանաւոր մեր լուսաւոր ժամանակը, ուսումնարանները, մամուլը և նորա եղանակը գործողները, որոնց թւում և ինքը պ. Աղայեանցը... ֆոխանակ նպաստելու ժողովրդին՝ հետզհետեւ արատելի իւր պատմական տղէտ մոլորութիւններից, փոխանակ ոչնչացնելու, փարատելու հին կռապաշտական բարբարոս հասկացողութիւնները, — դժբաղդաբար, պ. Աղայեանցը, իւր հէքիաթներով, աւելի ամրացնում է ժողովրդի հաւատը դէպի գերբնական անմիտ և սարսափեցնող, վախեցնող երևութիւնները, աւելի խոր մտաւոր-բարոյական անդունդի մէջ է կործանում անմեղ երեխաների քնքուշ խնքը և երևակալութիւնը: Եւ արդ ընդհանուր անում է պ. Աղայեանցը բոլորովին անկեղծօրէն, միանգամայն համոզւած, որ «Աղբիւր»-ի մէջ տպւած հէքիաթները մեծ հետաքրքրութեամբ կարդացւում են մեղանում: Այո, կարդացւում են... Իսկ ինչ հետեանքի են հասնում արդ կարդացողները, ինչ մտաւոր-բարոյական օգուտ են ստանում արդ հէքիաթների ընթերցումից, երեխաներին կրթելու, դաստիարակելու և ազնւացնելու համար՝ պէտք է տալ նրանց հասկանալի, իրական, ճշմարիտ կենսական պատմութիւններ ու դէպքեր, և ոչ թէ երևակալական թաղաւորների հիւանդոտ, վնասակար, անբարոյականացնող պատմութիւններ, որոնց մէջ չը կալ ոչ մի բարձր և ազնիւ զղացմունք, ոչ մի խելացի, մարդկային գաղափար՝ բացի սարսափից, դողից և վախնալուց: Երեխային ծանօթացրէք ներկա և անցեալ մարդոց «կեանքի» հետ, նրանց իսկական գործերի հետ, նրանց բարոյական ընդհանուր մարդկային արժանաւորութեանց հետ: Գեղեցիկ պատմութիւններ և դէպքեր նկարագրելով՝ ցոյց տւէք երեխաներին բնութեան և կեանքի ճշմարտութիւնը, ոգևորեցէք նորա սիրաւը բուն մարդկային ազնիւ ու վսեմ գործերով, զգացմունքներով, եւ արդ ամենը հիանալի կերպով աջողւում է պ. Աղայեանցին. նա ինքն էլ արդ գիտէ: Ունենալ արդեան սէր դէպի երեխաները, ունենալ արդարի զեթական լեզու, գրաւիչ և կախարհող վիպասանական տաղանդ, և չը ծառայել՝ ամէն մի քաղաքիստում՝ իւր ժամանակի էական շահերին, — արդ ներելի չէ պ. Աղայեանցին: «Աղբիւր»-ը պահւում է պ. Աղայեանցով և թող պահւի արուհետեւ. իսկ պ. Աղայեանցը թող տալ իւր «Աղբիւր»-ին կենսական, ճշմարիտ ողի, թող ներշնչէ նորա մէջ թարմ, եղացող և կենդանի հոսանքներ...